Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Որակի կառավարում

Լուծումների իրականացում Ա3

Առաքելությունը իրականացրել են՝
Լարս Թյուգեսեն, Դանիայի Վիճակագրություն
Անեգրետ Վուլֆ, Դանիայի Վիճակագրություն

Հայաստան, Սեպտեմբերի 26-30, 2011

Տարբերակ՝ 1-ին նախագիծ

Հեղինակի անունը, հասցեն և էլ փոստի հասցեն.

Լարս Թյուգեսեն
Դանիայի Վիճակագրություն
Sejrøgade 11
ԴԿ2100, Կոպենհագեն Ø
Հեռ: +45 3917 3941
lth@dst.dk

Անեգրետ Վուլֆ
Դանիայի Վիճակագրություն
Sejrøgade 11
ԴԿ2100, Կոպենհագեն Ø
Հեռ: +45 3917 3155
awu@dst.dk

Հապավումների ցանկ

ԱՊ Անդամ պետություն
ՀՀԱՎԾ Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայություն
ՈՀ Որակի հռչակագիր
ՈԱԽ Որակի աշխատանքային խումբ

Բովանդակությունների ցանկ

Բովանդակությունների ցանկ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
.....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
1. Ընդհանուր մեկնաբանություններ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
2. Քայլեր և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկներ.....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
4. Առաջարկություններ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
5. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր ..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 2. Առաքելության ծրագիր Սեպտեմբերի 26-30, 2011.....**Fejl! Bogmærke er ikke defineret.**1
Հավելված 3. Հանդիպումներ անձանց հետ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 4 Մեթատվյալների շնորհանդես աշխատակիցների համար ...**Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 5 Մեթատվյալների վերաբերյալ սեմինար սպառողների հետ..... 20
Հավելված 6 Որակի հռչակագրի պահպանում 25
Հավելված 7 Ինտերնետային տվյալների բազա PX-Web – PC-Axis..... 28

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայությունում իրականացված առաքելության արդյունքում: Սա Բաղադրիչ Ա-ի շրջանակներում երրորդ գործունեությունն էր և նվիրված էր որակի հռչակագրերին, որակի մեթատվյալների և տվյալների տարածման համակարգերին:

ԱՊ փորձագետները ցանկանում են իրենց երախտիքի խոսքն արտահայտել այն բոլոր պաշտոնյաներին և անհատներին, որոնց հետ իրենք հանդիպումներ են ունեցել Հայաստանում գտնվելու ընթացքում՝ վերջիններիս ցուցաբերված աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես նպաստեց փորձագետների աշխատանքին:

Սույն զեկույցում ներկայացված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի վիճակագրական ծառայության տեսակետների հետ պարտադիր չէ:

2. Քայլեր և արդյունքներ

Առաքելության ընթացքում փորձագետները ներգրավված են եղել մի շարք աշխատանքային գործունեությունների մեջ՝

- Հանդիպում ԹՄԽ-ի և ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ. նախորդ առաքելությունից հետո իրականացվող գործողությունների ուսումնասիրում և շաբաթվա աշխատանքային ծրագրի քննարկում:
- Հանդիպում *Որակի Աշխատանքային Խմբի (ՈԱԽ)* հետ որակի զեկույցների գնահատման վերաբերյալ:
- Մեթատվյալների և մեթատվյալների համակարգի ներկայացում ՈԱԽ-ին, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ –ի Բիզնես վիճակագրության, Ֆիանսների և մեթոդաբանական բաժնի աշխատակիցներին Կառուցվածքային Բիզնես Վիճակագրության վերաբերյալ:
- Հանդիպում շահառուների հետ՝ Կենտրոնական բանկ, Ֆինանսների նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն և ՀՀ ԱՎԾ ստորաբաժանումների ղեկավարներներ:
- SS բաժնի ղեկավարի, ինչպես նաև տվյալների տարածման բաժնի ղեկավարի և այլ աշխատակիցների համար պատրաստված շնորհանդես PC-AXIS/PX-Web ծրագրի վերաբերյալ:
- Բաղադրիչ Ա-ի հետագա աշխատանքային ծրագրի մշակում:
- Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ՝ ամփոփում, արդյունքների ներկայացում և առաջարկություններ: Համաձայնություն առաջիկա քայլերի վերաբերյալ:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Բոլոր գործողությունները, որոնք նախատեսված էին Ա 2 գործունեության շրջանակներում իրականացվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից:

Որակի հռչակագրեր

Որակի Հռչակագրերի հետ կապված աշխատանքները վերահսկվում են կառավարող խմբի կողմից, որը ղեկավարվում է Մեթոդաբանության բաժնի պետ Լիլիթ Պետրոսյանի կողմից: Այս խումբը նաև պատասխանատու է սպասարկման մոնիտորինգի ընթացակարգերի մշակման համար: Խումբը հանդիպումներ է ունենալու յուրաքանչյուր եռամսյակը մեկ՝ արդիականացումները վերանայելու և շահառուներին համապատասխան զեկույցներ տրամադրելու նպատակով:

Հետևյալ ճյուղային ոլորտները ներկայացրել են իրենց որակի հռչակագրերը՝

- Սպառողական գների ինդեքս
- Աշխատանքի շուկա
- Արդյունաբերական արտադրանքի թողարկում
- Գյուղատնտեսական տեխնիկա
- Ազգային հաշիվներ

Առայժմ միայն Գների վիճակագրության և Արդյունաբերության վիճակագրության բաժինների կողմից ներկայացված հռչակագրերն են թարգմանվել անգլերեն լեզվով, ուստի դրանք հիմք են հանդիսացել փորձագետների մեկնաբանությունների համար: Գների վիճակագրությունն առաջինն է ներկայացրել որակի զեկույցի նախագիծը, որն ուղարկվել էր ԱՊ փորձագետներին իրենց դիտողությունների համար: Բոլոր դիտողությունները հաշվի են առնվել ՀՀ ԱՎԾ-ի կողմից և վերանայված Որակի Հռչակագիրն որպես <<ձևանմուշ>> կհանդիսանա մյուս բոլոր հռչակագրերի համար:

Արտադրանքի ցանկը, որը ներառում է 131 ապրանքներ վերջանական տեսքի է բերվել և հաստատվել է:

Շնորհանդես շահառուների և աշխատակիցների համար

Մեթատվյալների վերաբերյալ շնորհանդես էր պատրաստվել ԱՊ փորձագետների կողմից, որը ներկայացվեց արտաքին հիմնական սպառողներին և ստորաբաժանումների ղեկավարներին: Մեթատվյալները մարտահրավեր են հանդիսանում բոլոր վիճակագրական կազմակերպությունների համար և վերջինիս իրականացումը դժվարին աշխատանք է: Ինչևէ, այն շատ կարևոր է սպառողների համար, որպեսզի նրանք կարողանան հասկանալ և ճիշտ վերլուծել տվյալները:

Հիմնավորված և հուսալի վիճակագրություն ունենալու նախապայմաններից է հանդիսանում պաշտոնական վիճակագրության համար մեկ աղբյուր ունենալու կարևորության գիտակցումը, տվյալ դեպքում Հայաստանի համար դա ՀՀ ԱՎԾ-ն է: Սա նաև ՄԱԿ-ի Պաշտոնական Վիճակագրության Հիմնարար Սկզբունքների էությունն է:

Մեթատվյալները միաժամանակ հանդիսանում են պաշտոնական վիճակագրության դերի աջակցություն՝ այն դարձնելով ըմբռնելի և մատչելի:

Արտաքին սպառողների թվում են Կենտրոնական բանկը, Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունները: Նրանք բոլորն էլ շեշտեցին մանրամասն փաստաթղթավորման և

մեթատվյալների անհրաժեշտությունը, ինչպես նաև հեշտ օգտագործման գործիքի անհրաժեշտությունը՝ տվյալների ստացման և ներբեռնման համար: Նրանք համարում են, որ Որակի Հռչակագրի կառուցվածքը բավարում է իրենց պահանջներին և խիստ կողմ էին ՀՀ ԱՎԾ-ում մեթատվյալների վերաբերյալ շարունակական աշխատանքներին:

Կազմակերպում

Հանդիպում էր կազմակերպվել նաև մեթատվյալների աշխատանքներում ներգրավված աշխատակիցների հետ, որի նպատակն էր քննարկել նշված հարցերը: Մեթատվյալների աշխատանքները կազմակերպելիս, ԱՊ փորձագետները խորհուրդ են տալիս ունենալ ոչ-կենտրոնացված պատասխանատվություն բովանդակության և կենտրոնական գործիքների առումով, կանոններ, ուղեցույց և ընթացքի հետևում, քանի որ կլինեն շարունակական արդիականացումներ և վերանայումներ:

Տարածման գործիք

PC-Axis ծրագիրը գործիքների փաթեթ է, որն օգտագործվում է վեբ կայքի ինտերակտիվ տվյալների բազայում տվյալների ներկայացման համար: Այն կառուցված է բազմակի չափերի աղյուսակներից (խորանարդներից), սակայն այն կարող է նաև տեղավորել ժամանակաշարեր և ցուցանիշներ: Համացանցի տարբերակը, PX-Web-ը, կարող է կապակցել տվյալները մեթատվյալների հետ: PC-Axis/PX-Web-ը կիրառվում է մոտավորապես 50 վիճակագրական գրասենյակների կողմից և միջազգային կազմակերպությունների կողմից, և շարունակաբար զարգացվում է՝ հաշվի առնելով սպառողների կարիքները:

Ծրագիրը կարող է ներբեռնվել և փորձարկվել՝ առանց որևէ վճարում կատարելու, փորձնական ժամանակահատվածով, ինչպես նաև հասանելի է փորձնական տվյալների բազան: Առաջարկվեց, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն ուսումնասիրի կիրառման հնարավորությունները՝ այցելելով նաև այն երկրների վիճակագրական գրասենյակների վեբ կայքերը, որոնք կիրառում են PX-web ծրագիրը: Արտոնագրման արժեքը կազմում է տարեկան 1,000 ԱՄՆ դոլլարից պակաս գումար կամ մոտավորապես 2,000 ԱՄՆ դոլլար մեկ անգամյա արտոնագրի ձեռք բերման համար: Շնորհանդեսին ներկա էին SS, տարածման և գրադարանի աշխատակիցները: Ընդհանուր տպավորությունն այն է, որ նրանց համար ծրագիրը շատ արդյունավետ է: Որոշումը կկայացվի նախքան 2012 թվականի հունվար ամիսը:

4. Առաջարկություններ

Առաջարկվում է շարունակել իրականացնել *Որակի Հռչակագրերը* միաժամանակ բոլոր արտադրանքների համար՝ նպատակ ունենալով բոլոր արտադրանքների վերաբերյալ դրանք ամբողջապես իրականացնել հայերեն լեզվով մեկ տարվա ընթացքում: Այսպիսով, յուրաքանչյուր եռամսյակում պետք է պատրաստ լինեն մոտավորապես 30-40 հռչակագրեր հայերեն լեզվով: Որակի կառավարման աշխատանքային խմբի 2011 թվականի հոկտեմբեր ամսվա հանդիպման ժամանակ կհրավիրվեն բոլոր ստորաբաժանումների ղեկավարները՝ հաշվետվությունների պատրաստումը զուգահեռաբար սկսելու և առաջիկա եռամսյակի համար նպատակներ սահմանելու համար:

ՀՀ ԱՎԾ պետք է իրականացնի փորձնական ուսումնասիրություն պայմաններ սահմանելու համար, որոնք պետք է սահմանված լինեն հասկացությունների տվյալների բազայում (Գների վիճակագրությունը կարող է համարվել որպես փորձնական ուսումնասիրություն):

Առաջարկվում է որպեսզի *Որակի Հռչակագրերը,* որոնք այս պահին գրված են Word փաստաթղթային տարբերակով, առաջիկայում փոխակերպվեն *Որակի Հռչակագրի Տվյալների բազայով,* որտեղ յուրաքանչյուր բաժին մեկ առանձին միավոր է, ինչպես պատկերված է ստորև՝ կանաչ վանդակները խորհրդանշում են Որակի Հռչակագրի Տվյալների բազան:



Սա հնարավորություն կտա այս պարբերությունները ՀՀ ԱՎԾ-ի կայք էջի տարբեր մասերում ինքնուրույնաբար օգտագործելու համար, ինչպես նաև այլ կազմակերպությունների վեբ կայքերում կիրառելու համար: Երբ բոլոր Word փաստաթղթերը (նկարում պատկերված են կապույտ գույնով) փոխակերպվեն և տվյալների բազայի հաշվետվության տիրույթը դրվի իր տեղում, ապա արդեն Word-ի փաստաթղթերը կիրառելի չեն լինի:

Առաջարկվում է, *սկսել Հասկացությունների Տվյալների բազայի* մշակումը (պատկերում՝ տես կարմիր գույնով նշված վանդակները) և հղում անել դրանք Որակի Հռչակագրերի Տվյալների բազայի հասկացությունների անվանումներից այս Հասկացությունների Տվյալների բազայի սահմանումներին:

Վերջապես, խորհուրդ է տրվում ստեղծել *տվյալների տարածման բազա,* որն ի վերջո, կպարունակի բոլոր այն վիճակագրությունը, որը հրապարակվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրական ժամանակում, և կհանդիսանա վիճակագրության հիմնական աղբյուր շատ սպառողների համար: Ենթադրվում է, որ տվյալների բազան կստեղծվի PC-AXIS ծրագրի գործիքով և PC-AXIS-ին առնչվող գործիքների փաթեթով, որի արդյունքում ՀՀ ԱՎԾ –ն նույնպես կդառնա համաշխարհային PC-Axis ընտանիքի անդամ:

5. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր

Առաքելությանը հաջորդող շաբաթվա ընթացքում ԱՊ փորձագետները պետք է ՀՀ ԱՎԾ-ի կողմից ստանան 3-5 փորձնական Որակի Հռչակագրերի անգլերեն տարբերակները: Դրանցից առաջինը (գներ) արդեն իսկ ուսումնասիրվել և վերջնական տեսքի է բերվել և առաջիկա շաբաթների ընթացքում փորձագետները պետք է ուսումնասիրեն և իրենց մեկնաբանությունները տրամադրեն մյուս 2-5 հռչակագրերի վերաբերյալ:

2012 թվականի Հունվարի կեսերին ՀՀ ԱՎԾ –ում պետք է ավարտին հասցվեն և վերանայվեն ևս 30 որակի հռչակագրեր հայերեն լեզվով, որոնցից 10-15 –ը պետք է արդեն իսկ թարգմանված լինեն անգլերեն լեզվով: Վերջնական նպատակն այն է, որպեսզի բոլոր Որակի Հռչակագրերը լինեն երկու լեզուներով:

Բոլոր այս որակի հռչակագրերը պետք է տեղադրվեն վեբ կայքի <<Փաստաթղթավորում էջում>>: ՀՀ ԱՎԾ-ն պետք է ստեղծի Հասկացությունների Տվյալների բազայի ձևաչափ և թողարկի նախագծային տարբերակներ առնվազն գների վիճակագրությանն առնչվող հասկացությունների վերաբերյալ: ՀՀ ԱՎԾ-ն կարող է ուղարկել մի շարք հասկացությունների սահմանումների օրինակներ ԱՊ փորձագետներին՝ վերանայման և մեկնաբանությունների տրամադրման համար:

ՀՀ ԱՎԾ-ն պետք է փորձարկի PX-Web ծրագիրը 2011 թվականի ընթացքում և մինչև 2012 թվականի հունվար ամիսը որոշում կայացնի PC-Axis/PX-Web ծրագրերը որպես տվյալների բազայի տարածման գործիք կիրառելու վերաբերյալ: Դրական որոշում կայացնելու դեպքում, գործունեություն Ա4 –ը կիրականացվի ինչպես նախատեսված էր, այլապես այդ գործունեությունը պետք է վերանայվի:

Հաջորդ առաքելությունները. Նոր գործունեությունը՝ *Ա3.1 Մեթատվյալների ընթացքի հետևում* ներկայացված է և ինչպես ակնկալվում է այն կիրականացվի 2012 թվականի հունվարի կեսերին ԱՊ փորձագետի Հայաստանում կայանալիք կարճ առաքելության շրջանակներում: Այս առաքելության ընթացքում կուսումնասիրվեն Որակի Հռչակագրերի և Հասկացությունների Տվյալների բազայի հետ կապված աշխատանքների զարգացումները: Ա4 առաքելությունը, որը վերաբերվում է *PX-Web ծրագրի տեղադրմանը և վերապատրաստմանը* նախատեսվում է իրականացնել 2012 թվականի ապրիլ ամսին:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք
Նախագիծ Տեխնիկական առաջադրանք (Ա3) Սեպտեմբերի 26-30, 2011

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում
Բաղադրչիչ Բ Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպենդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության բարելավում
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսական Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ ՏՀՏ Հանրություն

Գործունեություն Ա3 Լուծումների իրականացում

1. **Գործունեության նպատակը**

Սույն գործունեությունը երրորդ գործունեությունն է բաղադրիչ Ա-ի շրջանակներում, որի նպատակն է քննարկել այն հարցերը և իրականացնել այն լուծումները, որոնք առաջարկվել են նախորդ երկու գործունեությունների զեկույցներում: Հատկապես, կքննարկվեն արտադրանքի ցանկի նախագիծը և որակի հաշվետվությունները և կտրվեն վերջնական առաջարկություններ, ինչպես նաև կքննարկվեն մեթատվյալները և մեթատվյալների, ինչպես նաև տվյալների տարածման վերաբերյալ հարցերը:

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Գործունեության ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

o ԱՊ փորձագետները ներկայացնում են մեթատվյալները և մեթատվյալների/տարածման համակարգը;
o Հետագա քննարկումներ արտաքին շահառուների հետ
o Սկզբունքների վերջնական ընդունում կապված արտադրանքի ցանկի և որակի հաշվետվությունների հետ;
o Կոնկրետ որոշումներ կապված տեղեկատվության տարածման և որակի կառավարման համակարգերի հետ
o Բաղադրիչ Ա-ի աշխատանքային ծրագրի ճշգրտումներ
o Հաջորդ առաքելության ժամկետների որոշում Ա 4.1 և Ա 4.2

3. **Ծրագրի մասնակիցները**

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ (ՇԵ բաղադրիչի ղեկավար)
Արտաշես Շաբոյան, Մեթոդաբանական բաժնի ղեկավար, Պետական Վիճակագրության Խորհրդի Անդամ
Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության բաժնի պետ
Լարս Թյուգեսեն, Վաճառքի և մարքետինգի տնօրեն, Դանիայի Վիճակագրության Ծառայության (ԱՊ Բաղադրիչի Ղեկավար)
Անեգրետ Վուլֆ, Տվյալների տարածման բաժնի ղեկավար, Դանիայի Վիճակագրություն

ՀՀ ԱՎԾ այլ աշխատակիցներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Գագիկ Անանյան, Վիճակագրական Խորհրդի անդամ
Վանուշ Դավթյան, ՏՏ պատասխանատու, Վիճակագրական Խորհրդի անդամ
Լիլիթ Պետրոսյան, Մեթոդաբանության բաժնի ղեկավար
Նարինե Մուշեղյան, Տեղեկատվության Տարածման բաժնի ղեկավար
Նատալիա Պողոսյան, ՏՏ Վարչության ղեկավար

Արտաքին շահառուներ, որոնք մասնակցում են գործունեությանը

Արդարադատության Նախարարության Ձեռնարկությունների Պետական Ռեգիստր
ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե
ՀՀ Կենտրոնական Բանկ

Հավելված 2. ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը, Սեպտեմբերի 26-30, 2011

Ժամը	Վայրը	Միջոցառում	Նպատակը/մանրամասները
Երկուշաբթի, 26 Սեպտեմբերի առավոտյան	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետ ների հետ	Ընթացիկ կարգավիճակը և զարգացումները վերջին գործունեությունից ի վեր, հաշվետվությունների ուսումնասիրում. 1.ՀՀ ԱՎԾ –ի որակի հարցերով ստեղծված աշխատանքային խումբը 2.Որակի հաշվետություններ և արտադրանքի ցանկը 3.Այլ զարգացումներ Ա 1 և Ա 2 գործունեությունների զեկույցների վերաբերյալ
Երեքշաբթի, 27 Սեպտեմբերի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում մեթոդաբանու թյան բաժնի և համապատաս խան ճյուղային բաժինների հետ	Քննարկել արտադրանքի ցանկը և որակի հաշվետվությունների նախագծերը. 1.Հայտնաբերված խնդիրները 2. ԱՊ փորձագետների ընդհանուր գնահատականը 3.Աշխատակիցների ուսուցում և այլ հաջորդական քայլեր
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	ԱՊ փորձագետները կներկայացնեն մեթատվյալները և մեթատվյալների/տարածման համակարգերը
Չորեքշաբթի, 28 Սեպտեմբերի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում արտաքին շահառուների հետ	Ստանալ տեղեկություններ ՀՀ ԱՎԾ-ի կողմից արտադրված պաշտոնական վիճակագրության հիմնական սպառողներից 1.Որակի հաշվետվություններ/հռչակագրեր 2.Պարբերական հանդիպումներ սպառողների հետ 3.Տարածման մեթոդները/գործիքները
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում տվյալների տարածման բաժնի հետ	Քննարկել նախընտրելի և հնարավոր SS լուծումները կապված տեղեկատվության տարածման հետ (PC Axis?)
Հինգշաբթի, 29 Սեպտեմբերի, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում SS վարչության և մեթոդաբանութ յան բաժնի հետ	Քննարկել որակի հաշվետվության համակարգը: Ինչ է անհրաժեշտ և նախընտրելի, ինչպիսի արդիականացման ընթացք է

			նախատեսված (ոչ կենտրոնացված), բյուջետային հարցեր
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Վերանայել և թարմացնել Բաղադրիչ Ա-ի աշխատանքային ծրագիրը
Ուրբաթ, 30 Սեպտեմբերի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հատուկ հանդիպումներ	Եզրակացություններ, որոշումներ և հանձնարարականներ: Հաջորդ առաքելության ազդեցությունը և կիրառելի աշխատանքային ծրագիրը ՇԵ փորձագետների համար:
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ Ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, որոշումներ և հանձնարարականներ: Հաջորդ առաքելության ազդեցությունը և կիրառելի աշխատանքային ծրագիրը ՇԵ փորձագետների համար:

Հավելված 3. Հանդիպումներ անձանց հետ

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ Նախագահ (ՇԵ Բաղադրիչի Ղեկավար)
Գագիկ Անանյան, Վիճակագրության Պետական Խորհրդի Անդամ
Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության Բաժնի Պետ
Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Վանուշ Դավթյան, ՏՏ պատասխանատու, Վիճակագրության Պետական Խորհրդի Անդամ
Լիլիթ Պետրոսյան, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ
Նարինե Մուշեղյան, ՀՀ ԱՎԾ Տվյալների տարածման և մարկետինգի բաժնի պետ
Լուսյա Խաչատրյան, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
Հայկուշ Տիտիզյան, Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ
Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ
Ջուլիետա Միրզոյան, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական
Լաերտ Հարությունյան, ՀՀ ԱՎԾ Բիզնես Ռեգիստրի բաժնի պետ
Աշոտ Անանյան, ՀՀ ԱՎԾ Արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ
Արսեն Ավագյան, ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ
Գեորգի Թորոսյան, ՀՀ ԱՎԾ Տրանսպորտի և Կապի վիճակագրության բաժնի պետ
Սուսան Հունանյան, ՀՀ ԱՎԾ Աշխատանքի վիճակագրության բաժին
Արմենուհի Առուշանյան, ՀՀ ԱՎԾ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժին
Ռուզաննա Պետրոսյան, ՀՀ ԱՎԾ Տվյալների բազայի մշակման և ծրագրավորման բաժին
Գայանե Սարգսյան, ՀՀ ԱՎԾ Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին
Նելլի Բաղդասարյան, ՀՀ ԱՎԾ Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Մարիամ Պետրոսյան ՀՀ ԱՎԾ Շինարարության վիճակագրության բաժին
Սիլվա Ուլուբաբյան, ՀՀ ԱՎԾ Տեղեկատվության Տարածման և մարկետինգի բաժին
Հասմիկ Մատինյան, ՀՀ ԱՎԾ Ֆինանսների վիճակագրության բաժին
Քրիստինե Մալաքյան, ՀՀ ԱՎԾ Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին
Լաուրա Բեյբության, ՀՀ ԱՎԾ Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակ. բաժին
Աննա Գրիգորյան, ՀՀ ԱՎԾ Մարդահամարի և ժողովրդագրության բաժին

Արտաքին սպառողներ

Լիլի Կարապետյան, ՀՀ Ֆինանսների նախարարություն
Լիանա Հարությունյան, ՀՀ Ֆինանսների նախարարություն
Արտակ Չիլինգարյան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Լուսինե Հարությունյան, ՀՀ ԿԲ
Լուսինե Հայրապետյան, ՀՀ ԿԲ

Հավելված 4.

Մեթոդվյալների շնորհանդես աշխատակիցների համար 28 Սեպտեմբերի, 2011

Սլայդ 1

Սլայդ 2



Սլայդ 3



Սլայդ 4

Սլայդ 5



Սլայդ 6



Սլայդ 7

Որ մեթատվյալները

- Ինչի մասին է վիճակագրությունը ընդհանրապես
- Հասկացություններ, սահմանումներ
- Որակ՝ ճշգրտություն, համադրելիություն
- Տվյալները, փոփոխականները
- Որտեղ կարելի է գտնել դրանք
- Որոնելի են

Սլայդ 8

Ինչպես. Կառուցվածքը



Սլայդ 9

Լավ օրինակ է Պորտուգալիայի օրինակը

- http://www.ine.pt/xportal/xmain?xpid=INE&xpgid=ine_main&xlang=en

9 16.1.2011

Սլայդ 10

Ովքեր պետք է պատրաստեն դրանք

- Ոչ կենտրոնացված արտադրության պատասխանատվություն
- Կենտրոնացված ղեկավարում, գործիքներ, կանոններ և որակի ապահովում
- Մեթատվյալների աշխատանքային խումբ
- Շարունակաբար արդիականացում
- Լսել սպառողների կարծիքները

10 16.1.2011

Սլայդ 11

Հավելված 5

Մեթատվյալների վերաբերյալ սեմինար սպառողների հետ, 28 Սեպտեմբերի 2011

Սլայդ 1



Սլայդ 2



Սլայդ 3



Խնդիրն այն չէ, որ մենք ունենք սակավ տեղեկատվություն, այլ ճիշտ հակառակն է: Սակայն դժվար է գտնել ճիշտ տեղեկատվություն ամբողջ կույտից: Մենք ցանկանում ենք վստահ լինեն, որ մարդկանց իրականում հասանելի են լավ որակի տվյալները: Սա ենթադրում է, որ նրանք տեղյակ են այդ մասին և կարծում են որ դա կարևոր է:

Սլայդ 4



Սլայդ
5

Սլայդ
6



Սլայդ 7

Որ մեթատվյալները

- Ինչի մասին է վիճակագրությունը ընդհանրապես
- Հասկացություններ, սահմանումներ
- Որակ՝ ճշգրտություն, համադրելիություն
- Տվյալները, փոփոխականները
- Որտեղ կարելի է գտնել դրանք
- Որոնելի են

Սլայդ 8

Որակի հաչակագրեր

- Հաստատուն կառուցվածք
- Նկարագրել յուրաքանչյուր 200 արտադրանքը
- Օրինակներ

Սլայդ 9



Սլայդ 10



Հավելված 6

Առաքելության եզրակացությունները, Սեպտեմբերի 26-30, 2011

Սլայդ 1

Սլայդ 2



Սլայդ 3

Առաջարկություններ

- Միաժամանակ իրականացնել 30-40 Որակի Հոչակագրեր յուրաքանչյուր եռամսյակ
- Որակի կառավարման խումբը պետք է հրավիրի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ Հոկտեմբերին զեկույցներ պատրաստելու համար և հիմնել նպատակներ առաջիկա եռամսյակի համար
- Իրականացնել փորձնական ուսումնասիրություն հիմնելու համար պայմանները, որոնք պետք է սահմանված լինեն հասկացությունների տվյալների բազայում (գների վիճակագրություն)

STATISTICS DENMARK

Սլայդ 4

Որակի հոչակագրի տվյալների բազա



STATISTICS DENMARK

Սլայդ 5

Գործողություններ որոնք պետք է իրականացվոն նախքան հաջորդ առաքելությունը

- 30 որակի հոչակագրեր հայերեն լեզվով, որոնցից 10-15 –ը անգլերեն լեզով
- Առկա որակի հոչակագրերը կտեղադրվեն ինտերնետային կայքում <<Փաստաթղթավորում էջում>>
- Մինչև 2012 Հունվարը որոշում կկայացվի PC-Axis /PXWeb ծրագրերը որպես տվյալների բազայի տեղեկատվության տարածման գործիք կիրառելու վերաբերյալ
- Հասկացությունների տվյալների բազա. իրականացնել փորձնական աշխատանք սահմանումների վերաբերյալ
- Հաջորդ առաքելություններ. հետևել մետատվյալների աշխատանքին, հունվար ամսին, PX-Web տեղադրում և վերապատրաստում ապրիլ ամսին:

STATISTICS DENMARK

Հավելված 7.

Ինտերնետային տվյալների բազա PX-Web-PC-Axis

Սլայդ 1

Տվյալների տարածման գործիք
PC-Axis

Անեգրետ Վուլֆ,
Դանիայի վիճակագրություն
awu@dst.dk

Սլայդ 2

Տարածման պահանջները

- Հասանելի է առցանց
- Գործում է բոլոր հարթակներում
- Ոչ մի տեղադրում չի պահանջվում օգտվողների կողմից
- Աղյուսակներ, գրաֆիկներ, քարտեզներ
- Շարունակական զարգացում օգտվողների/արտադրողների ազդեցության ներքո

Սլայդ 3

Սլայդ 4

The PCAXIS web site

Սլայդ 5



Սլայդ 6



Սլայդ 7



Սլայդ 8



Սլայդ 9



Սլայդ 10



Սլայդ 11



Սլայդ 12



Սլայդ 13



Սլայդ 14



Սլայդ 15



Սլայդ 16